

ԳԱԼԻՔԻ ՅՈՅՍԵՐՈՎ

Posted on July 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



(փոխան ծրագրի)**Ռուբեն Յովակիմեան**, Սեն Ռաֆայել, 13 Յուլիս 2022**«Հայ Ազգային արժեքների պահպանման գաղափարական հենքի միակ առանցքը Հայաստան աշխարհն է»:**

Մենք գուշակելու յատկութիւններից գուրկ ենք, բայց անհնար է չտեսնել, որ մեր երկիրը իր ոգին կորցնելու վտանգից զերծ չէ, եւ դա կարող է պատահել ոչ միայն համաշխարհայնացման (mondialisation, globalization), նաեւ չունենալու կամ մեր գլխին փաթաթած անվերջանալի ու յիմար պատերազմի պատճառով, այլ նաեւ ու մասնաւորապէս՝ մեր ներքին հասարակական եւ տնտեսական աննախընթաց անորոշ յարաբերութիւնների հետեւանքով, որը յամառութեամբ պարտադրոււմ է պարուրուած իրական կեդծիքներով եւ սուտ գաղափարախօսութիւններով:

Ժամանակն է արտագաղթ-ներգաղթի, ինչպէս նաեւ երկրում տիրող անհամար դժգոհութիւնների խնդիրները քննարկել հետեւողականօրէն, լրջօրէն ու պետական մակարդակով՝ առանց թաքցնելու իրականութիւնը:

Եթէ մեր իշխանութիւնների նպատակն է տեսնել այսօրուայ դրութիւնը աւելի վատթար վիճակում, ապա բաւական է շարունակել երեւոյթները նոյնութեամբ՝ քաջալերելով միջակութեանը, հարստացած ու յղփացած ճարպիկ գործարարների կողքին՝ անտեսելով մտաւորականութեան տնտեսական դժուարութիւնները, որոնց մասնակցութիւնը հասարակական կեանքում կասկածելի է ու անորոշ, գրեթէ աննշմար: Կաղում են մեր մշակոյթն ու կրթութեան համակարգը, անհրաժեշտ բարձրութեան ու պարզ մակարդակի վրայ չի գտնուում հարկային քաղաքականութիւնը, արդարադատութիւնը դեռ թափանցիկ չէ, իսկ ազգային արդիւնաբերութեան ծաւալման մասին բոլորովին խօսք ու ծրագիր չկայ եւ այլն: Մամուլը իր կատարեալ տեղը դեռ չի գտել:

Անհրաժեշտ է, որ դարերով երագած ու արեան գնով ձեռք բերուած մեր պետականութիւնը գտնի իր իսկական տեղն ու նշանակութիւնը՝ հեռու մնալով անհատի կենտրոնաձիգ գործօնից:

Մեր երկրի կիսալքուած վիճակը կարգաւորելու ճամբաները մեզ տանում են դէպի հզօր տնտեսական պետականութիւն ստեղծելու ուղղութեամբ, երբ իշխանութեան բարձրաստիճան գործիչները հասկանան, ընդունեն եւ որոշեն միախմբել եկամտաբեր բոլոր գործարքները ժողովրդի ձեռքում՝ կենտրոնացնելով ու ստեղծելով **ազգային հարստութիւն**՝ ստեղծելով ԱԶԳ եւ ՊԵՏՈՒԹԻՒՆ համահունչ կազմով:

Բաւական ապականուած ու լարուած է երկրի քաղաքական մթնոլորտը, ուր՝ տարբեր լիցքաւորուած խմբաւորումները յաճախ իրար հակասող եւ միշտ իրարամերժ են:

«Կուսակցութիւն» յորջորջուող խմբաւորումները գրաւել են երկրի քաղաքական դաշտը,

չունեն անկախ ու ինքնուրոյն լինելու մտայնութիւնը, քաղաքական կամքը եւ քաջութիւնը, ինչպէս նաեւ անհրաժեշտ մասնագիտական պատրաստութիւն:

Ամենակարող մարդ մենք չունենք:

Մենք այլեւս իրաւունք չունենք որեւէ տեսակի կորուստների հանդուրժելու:

Փորձենք ներկայացնել մի քանի բնագաւառներ՝ գիտակցելով, որ այն վերջնական չէ ու հեռու է ամբողջական ու կատարեալ լինելուց.



Քարահունջ

ա) Հարկային համակարգ

- Բոլոր տեսակի սակաւապետերին (օլիգարխներին) զսպելու, սանձելու ու կարգի բերելու նպատակով անհրաժեշտ է, որ որոշեալ գումարի եկամուտ ապահովող ձեռնարկութիւնները պետականացուեն բաժնետիրական սկզբունքներով, որը կ'ապահովի կանոնաւոր եկամուտ երկրի համար, փոխանակ պետութիւնից աւելի հարուստ անձանց խնդրատուն լինելու:
- Թափանցիկ մաքսային ծառայութիւններ:
- Մաքսային ծառայութիւնների բարձրաստիճան պատասխանատուների վարած

ց) կենսը չի լինում նրանց աշխատավարձի շնորհիվ:

- Երկրի համար կարելու ընդերքային նիւթերի մշակման ու սեփականաշնորհուած ռազմավարական բոլոր ձեռնարկութիւնները պիտի վերադառնան պետութեանը:

բ) Արդարադատութիւն

- Այն կատարելապէս անկախ պիտի լինի իշխանութիւններից :
- Պատասխանատուները պիտի լինեն ոչ նշանակովի՝ այլ ընտրովի:
- Քաղաքացիների պարտականութիւնները պիտի լինեն յստակ, ինչպէս եւ նրանց ան-ձեռնմխելի իրաւունքները:

գ) Առողջապահութիւն

- Ներկայիս երկրի հիւանդանոցների մեծամասնութիւնը գտնուում է անհատների ձեռքին:
- Անթոյլատրելի ու անհանդուրժելի է, որ միջին դասակարգի հիւանդները հարստաց-նեն բուժման կենտրոնների տերերին:
- Բուժման կենտրոնները վերադառնել պետութեան հսկողութեան ներքոյ:
- Ծանր հիւանդութիւնները պիտի խնամուեն ճրի:
- Բնագաւառի բոլոր աշխատակիցները պիտի վճարուեն պատուաւոր ու հաստատու-ած սակագներով:
- Միւս երկրները պայմաններով պիտի աշխատեն նաեւ դեղատները:
- Միջավայրը մաքրուելու է դեղորայք հայթայթող մասնաւոր տարբեր աճպարար ձեռ-նարկութիւններից:
- Միւս երկրների օրինակով կարելի է ստեղծել բժիշկների միաբանութիւն (ordre), որը թոյլ կը տայ հսկել ընդհանուր ցանցի անխափան գործունեութիւնը եւ արհեստա-վարժ ճանապարհով ներմուծել համաշխարհային գիտական առաջընթացը:
- Կարելի է նաեւ թոյլ տալ, որ մասնագիտացած բժիշկները ունենան իրենց մասնա-ւոր դարմանատունը, ուր որեւէ անձ կարող է ունենալ բուժական խորհուրդ (consultation) նախարարութեան կողմից որոշուած սակագներով:

դ) Կրթութիւն

- Այն մեր յաջորդ սերունդին ձեւ ու բովանդակութիւն տուող մարմինն է, ու նրա ղեկա-վարը պիտի լինի մանկավարժական փորձառութեամբ մէկը, որի թիւ մէկ հոգսը լի-նելու է մայրենի լեզուի կատարեալ տիրապետումը, անշուշտ զանց չառնելով միւս գիտելիքները:
- Դպրոցները, որոնք վկայականներ են տալիս եւ ո՛չ գիտութիւն, անհրաժեշտ է, որ վե-րանան ասպարեզից:
- Մանկավարժների աշխատավարձը արժանապատուութեան խնդիր է:
- Մեր երկրի բնակչութեան զգալի մասը գռեհիկ է ու կիսագրագետ: Անկասկած, դա

տիրող ուսումնական համակարգի տեսության հետեւանքն է:

- Պէտք չէ մոռացութեան մատնել դասական ուղղագրութեան վերադառնալու հարցը եւ ազգի երկու հատուածները իրար համահունչ կցելու համար **ստեղծել նոր միասնական հայերէն:**
- Մեր համալսարանները, ուր երիտասարդ ներուժի հսկայական պաշարներ կան, պէտք է վերածել հետազօտութիւնների ու գիտական նորարարութիւնների ստեղծագործ կենտրոնների:

ե) Մշակոյթ

- Այս բնագաւառում եւս անելիքները անհամար են, բացակայ է ազգային մտածելակերպը: Պատահական մարդիկ տեղ պիտի չունենան այս բնագաւառում:
- Անթոյլատրելի է ներկայիս գրաւոր մամուլը իր անորակ լեզուական օտարամոլութեամբ ու հայիոյանքների առատութեամբ:
- Հեռատեսիլը ու ծայնասփիւռը (ռադիոն) ամբողջութեամբ պիտի վերաստեղծուեն: : «Ա»յա խօսութիւնը հաստատուած է:
- Ցուցանակների բազմազան ու բազմաբովանդակ արուեստը՝ վաղուց անցել է անհետեթութիւնների ռուբիկոնը:

զ) Արդիւնաբերութիւն եւ աշխատանքի իրաւունք

- Ներկայիս այն գրեթէ անգոյ է: Նախկին արտադրական միաւորները դարձել են ինչ որ անհատների սեփականութիւն՝ վերածուելով անգործածելի խոպանի:
- Անհրաժեշտ է զարկ տալ զարգացնելու փոքր ու միջին արտադրամասերը:
- Թուրքիայից ներմուծուող ապրանքների զգալի մասը հնարաւոր է արտադրել մեր միջոցներով:
- Փոխանակ եղած հնարաւորութիւնները ներդրելու հիւրանոցային ու ճաշարան-սրճարանային ոլորտում, որոնց թիւը պահանջից աւելի է, նախընտրելի է ստեղծել արհեստանոցներ, որ միաժամանակ կը լուծի նաեւ անգործութեան խնդիրը՝ ոսկերչութեան ու ադամանդագործութեան օրինակով:

է) Գիւղատնտեսութիւն

- Կարելի է ստեղծել համագործակցական (կոոպերատիվ) տնտեսութիւններ, որը թոյլ կը տայ աւելի արդիւնաւետ դիմակայել բնական արհաւիրքներին:
- Ջրբաշխումը կատարուում է անհատներին պատկանող միաւորումների միջոցով, նախընտրուում է եղած ջրերը ուղարկել դէպի հարեւան թշնամի երկիր քան տալ հարազատ գիւղացուն:
- Ջրային տնտեսութիւնը ազգային հարստութիւն է, այս միջավայրում սեփականատէրը պիտի լինի գիւղացին:
- Անհրաժեշտ է բազմացնել փոքր ջրամբարների ցանցը, որ միաժամանակ կը սնի

Ներկայիս վտանգի տակ եղած ստորգետնեայ ջրային պաշարները:

ը) **Շինարարութիւն**

- Երբեւէ շինարարութիւնը ներկայիս այնքան քառասային վիճակում չի եղել քան այսօր:
- Երկու տասնամեակ ի վեր կառուցում են որակով, բայց տարերային սկզբունքներով: Պետք է բանադրել այս աշխատածեւը:
- Անօրինական շինութիւնները պիտի քանդուեն ու տարածքները վերադարձուեն համայնքներին, իսկ թոյլատրողները պիտի պատժուեն օրենքի խստութեամբ:



Փառնի

թ) **Պաշտպանութիւն**

- Հպարտանալու տեղ ունէր մեր յաղթական բանակը: Փառք ու պատիւ նրա հերոսներին ու անդորր մշտնջենական մեր անմեղ զոհերին եւ բանակում եղած անբացատ-

րելի գոհերի երեւոյթը պէտք է բացայայտել, 44-օրեայ դժոխքը լռօրէն քննարկուելու է սխալներից գերծ մնալու համար:

ժ) **Հաղորդակցութիւն**

- Ճանապարհաշինարարութեան բնագաւառում զգալի է միջազգային մակարդակի փորձագէտների կատարեալ բացակայութիւնը:
- Եղած ներդրումները աւելի սիրողական են իրենց որակով, քան արհեստավարժ, որտեղից յաճախակի վթարների գոհերը բազում են:
- Վերջին տարիների նորակառոյց ճանապարհները պիտի վերանայուեն միջազգային նորմերին համապատասխան: Անվտանգութեան անհրաժեշտ միջոցները բացակայ են:

ժա) **Ընտրական համակարգ**

- Աշխարհի բոլոր երկրների նման, մեզ մօտ եւս այս բնագաւառը առաւել խոցելիներից է, ինչպէս այլուր մեզ մօտ, մեռելներն ու բացակաները քուէարկում են:
- Ընտրողների անուանացանկերը պիտի ամէնուրեք ազդագրուեն:
- Որեւէ ջանք պիտի չխնայել՝ բանադրելու համար քուէ ծախող ընտրողներին:

ժբ) **Վերահսկիչ սահմանադրական խորհրդաժողով**

- Այս մարմինը պիտի ստեղծուի իշխանութիւնների շրջանակներից դուրս եւ կատարելապէս անկախ: Այն պիտի բաղկանայ մէկ տասնեակի չափ անձերից, որոնք լինեն իրաւաբանական ու օրէնքներին լաւատեղեակ՝ առանց որեւէ կուսակցութեան պատկանող մասնագէտների:

ժգ) **Մամուլ**

- Հսկայական է մամուլի դերը ներկայ քաղաքական ու հասարակական կեանքում: Նրա ուժն ու ազդեցութիւնը կարելու է տնտեսական, բարոյական, մշակութային, առօրեայ կեանքի բոլոր բնագաւառներում: Իրաւ է, որ մամուլը իր անքակտելի տեղն ունի ամէնուրեք, միայն թէ նրա անկախութիւնն ու ճշմարտախօսութիւնը միշտ չէ, որ ապահովուած է: Անկախ, անշահախնդիր, գրագետ ու պարտաճանաչութիւններին գիտակից մամուլը մեծ նուէր է իւրաքանչիւր երկրի համար: «Արմենպրես»ի վերակառուցման եւ կարգի հրաւիրելու կարիք կայ հայերէնի տեսակով:

ժդ) **Պետութիւն -եկեղեցի (կրօն)**

Աւելորդ չէ յիշել պետութիւն-եկեղեցի կապի ու յարաբերութիւնների ներկայ եւ յետագայ կարգավիճակը: Ժողովրդավար բոլոր երկրները եկեղեցին՝ կրօնը, անշատել են հանրապետութիւնից, ոչ թէ ատելութեան սկզբունքից ելնելով, այլ որ նրանք տարբեր բնագաւառներ են ու պիտի գործեն իրարից անկախ:

Երկրում աչքի է զարնում եկեղեցաշինության մի նոր հոսանք: Ամենուր ավելի մեծ ու գեղեցիկ են կառուցվում նրանք, միայն թե տեղին է հարց տալ նրանց անհրաժեշտության մասին, երբ կենսական այլ խնդիրներ լուծման են սպասում:

Այսուհանդերձ, ճիշտ կը լինի այս խնդիրները դարձնել ժողովրդական քննարկումների նիւթ, առաւել ձեռով որոշելու եկեղեցւոյ դերը եւ նրա մասնակցութիւնը հարցերի ու պահանջների շուրջը: Բոլոր պայմաններում քաղաքականութեան ու կրօնի իրարից անջատումը դրական երեւոյթ է՝ թողնելով իւրաքանչիւրին իր ոլորտում: Տեղին է նաեւ չմոռանալ աղանդ կոչեցեալներին: Երկար դարերի ընթացքին հայ առաքելական եկեղեցին է, որ իր հոգեւոր պարտականութիւններին համընթաց յանձն էր առել նաեւ՝ քաղաքացիական ոլորտը: Այսօր այլ են մարտահրաւերները եւ խնդրոյ հանրային քննարկումը կարող է որոշակի եզրայանգման բերել, օգտուելով այլ երկրների փորձառութիւններից:

Վերոնշեալ մասնաճիւղերից բացի, կան նոյնքան կարեւոր միւս բնագաւառները (*Ամաւարկ (բիւջէ), Սփիւռք, Արտաքին, Ելեւմտական (ֆինանս գործեր), Անվտանգութիւն-նստիկանութիւն դիւանագիտութիւն եւ այլն*) որոնք եւս պիտի քննարկուեն ու ներկայացուեն մասնագետ եւ բնագաւառին մօտ կանգնած անձանց կողմից: Այս միջոցով կարելի պիտի լինի կազմել ապագայ տարիների զարգացման ծրագրերը:

Ի վերջոյ նշենք նաեւ, որ ներկայ գրութիւնը որեւէ ծրագրի մօտենալու յաւակնութիւնը չունի:

There are no comments yet.